Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, 2001 Թատերական փողոց 8/1-49
8/1-49 Taterakan st.Vanadzor, 2001,
Republic of Armenia
Հեռ. (tel.) +374 77 74 74 05, 0322 4 06 04
Էլ. փոստ (E-mail) arkatlawyer@gmail.com

«ԱՐԿԱՏ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԱՐԿԱՏ» ՍՊ ընկերությունը գրասենյակի հիմնադրման տասնամյակի կապակցությամբ տրամադրում է կրթաթոշակ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների «Իրավագիտություն» մասնագիտության առկա ուսուցման վճարովի համակարգի 2-4-րդ կուրսերում սովորող ուսանողների համար:

Կրթաթոշակի ծրագրին կարող են դիմել այն ուսանողները, ովքեր համապատասխանում են հետևյալ չափորոշիչներին.

1. Սովորում են Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների «Իրավագիտություն» մասնագիտության առկա ուսուցման վճարովի համակարգի 2-4-րդ կուրսերում,
2. Ունեն բարձր առաջադիմություն, այն է՝ Միջին որակական գնահատականը ՝ ՄՈԳ-ը 90 և ավելի է,
3. Չեն օգտվում այլ կազմակերպությունների, հիմնադրամների կողմից իրականացվող կրթաթոշակային և/կամ ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցման ծրագրերից, ինչպես նաև համալսարանի կողմից տրամադրվող զեղչերից:

Առաջնահերթություն կտրվի հետյալ սոցիալական խմբերին.

1. Երկկողմանի ծնողազուրկ ուսանող,

2. Միակողմանի ծնողազուրկ ուսանող,

3. Միածնող ուսանող,

4. Հաշմանդամություն ունեցող անձ,

5. Կենսաթոշակառու ծնող ունեցող ուսանող,

6. 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքի ուսանող,

7. 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքի ուսանող,

8. Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանող,

9. Վճարովի համակարգում 2 և ավելի ուսանող ունեցող ընտանիքի ուսանող,

10. Սահմանամերձ գյուղում հաշառում ունեցող ուսանող,

11. Բարձր կարիքավորության կարգ ունեցող ուսանող,

12. Մարտական հերթապահություն իրականացրած ուսանող,

13. Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված ուսանող:

Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում, որի ձևը ներկայացվում է հայտարարությանը կից,
- Անձը հաստատող փաստաթուղթ
- 1 լուսանկար (3×4 սմ չափսի),
- Ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, որը ներառի տեղեկություն մասնագիտության, ուսման վարձի չափի, ՄՈԳ-ի վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, որ ուսանողը չի օգտվում այլ կազմակերպությունների, հիմնադրամների կողմից իրականացվող կրթաթոշակային և/կամ ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցման ծրագրերից, ինչպես նաև համալսարանի կողմից տրամադրվող զեղչերից,
- Ծնողազուրկ լինելու փաստը հաստատող ապացույց (ըստ առկայության),
- Հաշմանդամության ունենալու փաստը հավաստող ապացույց (ըստ առկայության),

- Երեխա ունենալու փաստը հավաստող ապացույց (ըստ առկայության),
- 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքի վերաբերյալ ապացույց (ըստ առկայության),
- Վճարովի համակարգում 2 և ավելի ուսանող ունեցող ընտանիքի ուսանող լինելու փաստը հավաստող ապացույց (ըստ առկայության),
- Սահմանամերձ գյուղում հաշառում ունենալու փաստը հաստատող ապացույց (ըստ առկայության),
- Բարձր կարիքավորության կարգ ունենալու փաստը հավաստող ապացույց (ըստ առկայության),
- Մարտական հերթապահություն իրականացրած լինելու վերաբերյալ ապացույց (ըստ առկայության),

Դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացնել «ԱՐԿԱՏ» ՍՊԸ իրավաբանական գրասենյակ (հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Թատերական 8/1-49) մինչև սույն թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ։

Նշված ժամկետի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում գրասենյակի համապատասխան հանձնաժողովը կուսումնասիրի ներկայացված դիմումները և փաստաթղթերը, ինչից հետո հանձնաժողովը կընտրի 5 ուսանող։

Ընտրված ուսանողներին կտրամադրվի առաջին կիսամյակի՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար կրթաթոշակ՝ յուրաքանչյուր ամիս 10 000 ՀՀ դրամ չափով։

Կից ներկայացվում է դիմումի ձևը։

ԴԻՄՈՒՄ

(«ԱՐԿԱՏ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

Անուն/հայրանուն/ազգանուն		նկար
Ծննդյան օր/ամիս/տարի		
Հաշվառման և բնակության վայր		
Հեռախոսահամար		
Էլ. փոստ		
Ուսումնական հաստատություն		
Մասնագիտություն		
Կուրս		

Հակիրճ պատասխանեք հետևյալ հարցերին.

1. Ինչու եք ընտրել իրավաբանի մասնագիտությունը.

_____

_____

_____

2. Ինչու եք ցանկանում օգտվել կրթաթոշակի ծրագրից.

_____

_____

_____

3. Ինչու պետք է ընտրվեք հենց Դուք.

_____

_____

_____

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝

_____

(ստորագրություն) ___ ___ 2025 թվական